ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2010 թվականի N 411-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 1290-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը սահմանելու մասին» N 1290-Ն որոշմամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2010 թ. ապրիլի 23
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 25-ի N 411-Ն որոշման

Ա Ր Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԵՐԴՄԱՆ

1. Սույն արարողակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի (այսուհետ՝ անձ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու երդում (այսուհետ՝ երդում) տալու ընթացակարգը:

2. Երդման արարողությունը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (այսուհետ՝ վարչություն):

3. Հայաստանի Հանրապետության Նախագահի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին հրամանագիրն ստանալուց հետո վարչությունը 10-օրյա ժամկետում անձին ուղարկում է գրավոր ծանուցում՝ համաձայն ձևի:

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրին քաղաքացին ծանոթանում է վարչությունում՝ հրամանագրի քաղվածքն ստորագրությամբ ստանալու եղանակով: Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրին ծանոթանալուց հետո՝ նույն օրը, իրականացվում է քաղաքացու երդման արարողությունը:

5. Երդման արարողությունն անցկացվում է հանդիսավոր պայմաններում՝ Հայաստանի

Հանրապետության պետական դրոշի առջև:

6. Երդման արարողությունը վարչությունում սկսվում է վարչության պետի կամ նրա տեղակալի ներածական խոսքով, որից հետո ընթերցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը:

7. Անձը երդում տալիս է մեկ անգամ, բարձրաձայն և հանդիսավոր ընթերցելով «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված երդման տեքստը, և ստորագրում այն:

8. Վարչության պետը (տեղակալը) շնորհավորում է անձին երդում տալու կապակցությամբ, որից հետո հնչում է Հայաստանի Հանրապետության օրհներգը:

9. Երդման ստորագրված տեքստը կցվում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ փաստաթղթերին:

10. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով՝ երդում տված անձին տրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**

Ձև

Գ Ր Ա Վ Ո Ր Ծ Ա Ն ՈՒ Ց Ո Ւ Մ

Հարգելի _____
(ծանուցվողի անունը, ազգանունը)
.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության քաղաքացու երդման տեքստը

«Ես՝_____,
(անունը, ազգանունը)

դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, երդվում եմ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Պարտավորվում եմ հարգել Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը և սովորույթները:»:

Տեղեկացնում ենք, որ երդման արարողությանը մասնակցելու համար յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը _____ __ կարող եք ներկայանալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն

_____հասցեով,

_____սենյակ, _____ի մոտ:
(պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.